


THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻՂՐԻՍԻ ՄԻՒՆԱԿԵՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒՆ:

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՂՊԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏՄԻ, ԹԻՒ 31

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱԲԱԹ, ԵՈՒՆԻՍ, 11 1898

ԳԻՆ 3 ԱՆԵՐ

ՎՐԻՊԱԿ

Անցեալ շաբթուան ՏԻՂՐԻՍԻ առաջին երեսի առաջին սիւնի վերջի մասը «Այն մարդը որ մէկ ազգը աշատած էր» ըլլալու, պէտք էր ըլլար «Այն մարդը որ մէկ ազգը վերջի թուրք-ձէլլէն կուտ առնէ կորուստէ ազատած էր»: Նաև երրորդ երեսի 3րդ սիւնի մահազոյժերու մէջ կանգուցելու անուան փոխանակ կարգաբա Մեղքունեան գրելու՝ Առաքելեան գրուած էր:

ՊԱՏԵՐԱՂՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ծովակալ Ընչէյի պաշտօնական տեղեկագրին, որ Ուաշինկթըն հասաւ անցեալ օր, կ'ըսէ թէ Մայիս 31ին Մատաչուսէթս, Այովա և Նիւ Օրլինս զրահանաւորով ուժակոծած է Սանթիակոյի բերդերն՝ թշնամիի զօրով թիւնն ու ամբողջներու վիճակը ստուգելու համար: Իմրածու թիւնք տեղի ունեցած են 7000 կանգուն հեռաւորութեամբ:

Սէնթ Փօլ օժանդակ թնդանօթանաւոր Նիւ Եորքի նաւահանգիստը հասաւ անցեալ օր: Նաւակետը, Բափթըն Սիլուպի, (գեթաղը Մէյնի նախկին հրամանատարը) անմիջապէս ցամաք ելնելով Ուաշինկթըն գնաց, կ'ըսուի թէ հրամաններ առնելու համար:

Կառավարութիւնն որոշեց 300 միլիոնի արծէթուղթ հանել՝ պատերազմական ծախքերն հոգալու համար:

Հակառակ եկած հերքումներուն լուր հասած է թէ՛ շատ մը փոխադրանքներ մեծ քանակութեամբ զօրք և մթերք փոխադրած են զէպի Բիւպա:

Փորթ օ Փրինսէն լուր եկած է թէ ապստամբ Բիւպացիք Սանթիակոյի վրայ յարձակած են ճիշդ այն պահուն երբ ամերիկեան նաւատորմի զօրքերը կը ուժակոծէր:

Թրօլ և Ճոնս, որ գերի բռնուած և յետոյ փոխանակուած էին սպանիացի գերիներով, անցեալ օր Նախագահին ներկայացան՝ իրենց շնորհակալութիւնն յայտնելու համար:

Մանիլայէն լուր կը լրկեն Պէրլին թէ՛ Ֆիլիպինս կղզիներու պաշարու մի Երոպացիներուն միայն վրեժառու է ցարդ:

Սինիօր Գաթէլար Փրէթթ Բըվու ինթէրնասիօնալ հանդիսին մէջ կը քննադատէ Սպանիոյ Թագուհին՝ պատուաւոր նախարարութեան մը վերաբերեալ կառավարական գործոց խռովուած ըլլալու ամբաստանութեամբ: Միսկոնտակունք դատի ենթարկել կը խորհին զԳաթէլար իբր մատնիչ, և ըստ այնմ պատժել զայն:

Սան Ժուանէ Մատրիտ գրկուած պաշտօնական տեղեկագրից կ'ըսեն թէ Սամսնի վերջի ուժակոծութեանց առթիւ 7 սպանիացիք սպաննուած և 70 հոգի վիրաւորուած են: Վնասուած շէնքերուն մէջ է եղբոր ընդհանուր կառավարչին պալատն ու պաշտօնատեղին:

Ճըմայեբայէ կը հեռագրեն թէ անցեալ երեքշաբթի օր Օրէկոն առաջնակարգ զրահանաւոր Սանթիակոյի մօտերն՝ սպանիական թէրքը թօրփիլանուին հանդիպած ու քանի մը թնդանօթի յարուածներով ընկղզմեցուցած է զայն՝ իր 67 պաշտօնեաներով ու նաւատորմներով միասին:

Երկրորդ հեռագիր մը կը հերքէ այս լուր. իսկ ուրիշ մը կը կարծէ թէ ընկղմեալ նաւը Ֆիւրօր թօրփիլանուած է, որ գաղապարով կը ջանայ եղբոր Սէրվէրայի նաւատորմի զին միանալ: Սանթիակոյի նաւահանգստին մէջ:

Անցեալ կիրակի օր Մօլ Սէնթ Նիքօլասէ հեռագրուեցաւ ու պաշտօնապէս հաստատուեցաւ թէ ծովակալ Սամսըն նախընթացի շնորհակալութիւններով Մէրիմաք ամերիկեան մեծ փոխադրանաւ ընկղմել տալ Սանթիակոյ նաւահանգստին բերանը՝ ներսը ապստանող սպանիական նաւատորմից բանտարկելու համար: Այս նաւահանգստին բերանը կ'ըսուի թէ այնչափ նեղ է որ հազու մէկ մարտանաւ կրնայ դուրսը թեմալ անցնիլ. և հոն ընկղմող մեծ նաւ մը կրնայ անցուդարձն արգելել զիւրութեամբ: Այս յանգուքն խորհուրդ իրականացնելու համար ծովակալը ութը կամաւորներ կ'ուզէ, բայց, փոխանակ խնդրուած թւոյն՝ ահագին բազմութիւն մը յանձն կը առնէ կառարել կորստաբեր պաշտօնը՝ ամենայն սիրով: Սակայն ծովակալը կ'ընտրէ զանգակալ Բիչմետ Փ. Հոպսըն և եօթը հասարակ նաւազներ: Հետեւեալ օրը, առաւօտեան ժամը 3ին, փոխադրանաւ ճամբայ կ'ելնէ իւր կորստեան երթալու համար: Եւ որպէս զի դատապարտեալ շոգենաւն վրիպէր սպանիական բերդապահներու ուշադրութենէն, ամերիկեան նաւատորմի զօրքերը ուժակոծել կ'սկսէր: Բայց սպանիացիք չեն խաբուիր այդ ցոյցով, այլ ռուսներն կարկուտի արագութեամբ տեղալ կ'սկսին դատապարտեալ շոգենաւին վրայ, առանց սակայն կրնալ անոր մեքենաներն փաստելու: Տեղակալ Հոպսըն որոշեալ տեղն հասնելու պէս նպակով կը նետէ, ու անմիջապէս իր ընկերներուն հետ նաւակ մը մտնելէ վերջ, կանխաւ պատրաստած ելեքարական թելի մը դպելով ուժանակի ռուս մը կը պայթեցնէ շոգենաւին մէջ, ու զայն յատակ կը զրկէ իսկոյն:

Այս վտանգաւոր պաշտօնն, խղճի մտօք, կատարելէ վերջ, 8 քաջերն՝ հակառակ անկացող ռուսներուն՝ զէպի թշնամիին նաւատորմի թիակ վարել կ'սկսին, և անձնատուր կ'ըլլան իբրև պատերազմական գերիներ: Ութը քաջաց այս դիւցազնական գործ ոչ միայն զարմանք կը պատճառէ, այլ և սպանիական ծովակալի համակրանաց և գովեստներուն կ'արժանանայ: Սէրվէրա լաւ ընդունելութիւն ըրած է ճամբիկացի քաջերուն, և հարցուցած է անոնց թէ ի՞նչ կը փափաքին ունենալ այդ պարագա-

նէրու տակ. — Չոր հանգերձեղէններ և կարելի եղածին շափ շուտ փոխանակուելու ստիժ — պատասխանած են ամերիկացիք:

Հեռագիրն կը պատմէ թէ հետեւեալ օրն ծովակալ Սէրվէրա բարձրատիճան պաշտօնեայ մը, հրամանատար Օվիէտօ, Բայօն շոգենաւակով ծովակալ Սամսընի զրկած է՝ ութը գերիներու փափաքը կատարելու համար: Սպանիացի պատգամաւորն, որ ճերմակ դրօշակի տակ կը ճամբորդէ եղբոր, սիրալիք ընդունելութիւն գտած է Սամսընի դրօշակաւուին՝ Նիւ Եորքի մէջ, ու Սէրվէրայի կողմէ շնորհաւորած է զՍամսըն՝ այդպիսի քաջ պաշտօնեաներ ունենալուն համար: Ծովակալ Սամսըն փոխադարձաբար շնորհակալ եղած է Սէրվէրայի ցոյց տուած մարգարիտութեան ու հիւրընկալութեան համար, և խոստացած է ըստ կարելոյն դիւրացնել գերիներու փոխանակութեան խնդիրը: Հրամանատար Օվիէտօ այս բարեկամական սիրալիք(?) ընդունելութենէ վերջ, գերիներուն համար նոր հազուտներ ու գրամ առած կը մեկնի՝ խոր սրբաւորութեան տակ...:

Աւելորդ է ըսել թէ Տեղակալ Հոպսըն և իր քաջ ընկերներն օրուան դիւցազուններն են: Ուաշինկթընի կառավարութիւնը բանակցութեան մէջ է այս քաջերն՝ սպանիացի գերիներու հետ փոխանակելու համար:

Վերջի հեռագիրներն կը ծանուցանեն թէ Սամսընի միացեալ նաւատորմի զօրք նորէն ուժակոծել է Սանթիակոյի բերդերն՝ աւերու կործանում սպիռելով ամէն կողմ: Ծովակալը ցամաք հանած է նաև 5,000 զօրք, որք ապստամբներուն հետ միացած արևմտայն կուր մը մղած են սպանիական բանակին դէմ: Թշնամիին կորուստը խիստ ծանր է կ'ըսուի, իսկ ամերիկացոցը, մանաւանդ ծովայինը, խիստ աննշան: Այս մասին Սամսընի պաշտօնական տեղեկագիրն, որ 700 բառ կը պարունակէ եղբոր, զեռ գաղապարէն հաշուած է, ուստի և մանրամասնութիւնք անձանօթ կը մնան:

Վերջի ուժակոծութեանց ատեն սպանիական Բէյնա Մէրսիաի զրահաւորը Սանթիակոյի նաւահանգստին բերանը եկած է եղբոր ընկղմեալ Մէրիմաքը ուժանակով պայթեցնելով նաւահանգստին անցքը բանալու համար: Ամերիկեան մարտանաւք, ի մասնաւորի տակալ Օրէկոնը, ռուսներու հեղեղի մը տակ խորտակած ու վանած է սպանիացիին՝ անոր պաշտօնեաներէն մի քանին սպաննելով:

Ծովակալ Սէրվէրայի պաշտօնական տեղեկագիրն լուր կը տանի Մատրիտ թէ այս վերջի ուժակոծութեանց և ճակատամարտի մէջ սպանիացիք կուսնան 10 մեռեալ ու 35 վիրաւոր միայն, իսկ բերդերէն մի քանին ծանրապէս կը վնասուին. մինչ ամերիկացոց փնաք ծանր եղած լինել կը կարծէ: Սպանիական

ծերակայաբ շնորհաւորեց բանակն ու նաւատորմիդ այս «յաղթութեանց» համար:

Ուաշինկթընէն հեռագիր մը կը կարծէ որ ծովակալ Սամսըն իր ընդարձակ տեղեկագրին մէջ ըսած է թէ Սանթիակո քաղաքն ու նոյն նաւահանգստի մէջ ապստանող սպանիական նաւատորմիդ անձարակ վիճակի մը մասնուած են, անանկ որ մի քանի օրէն կը յուսայ քաղաքն գրաւել ու Սէրվէրայի նաւերն կցել ամերիկեան նաւատորմիդին:

Տեղակալ թէնուզ, Աւստրիացի նշանաւոր թնդանօթաձիգը, որ Սանթիակոյի բերդերու մէջ կը ծառայէր Սպանիոյ, սպաննուեցաւ վերջի ուժակոծութեանց ատեն: Աւստրիական կառավարութեան լուր տրուեցաւ այս մասին:

Սանթիակոյէն պաշտօնապէս լուր կ'երթայ Մատրիտ թէ Բէյնա Մէրսիաի զրահանաւոր ընկղմած է վերջի կուրին մէջ, ու ամերիկացիք 1500 մեռեալ ունեցած են:

Բանակին գլխաւոր մասը, 27 հազար հոգի, ճամբայ կ'ըսէ զէպի Սանթիակոյ, ուր կը հասնի այսօր:

ԹՈՒՐԻ ԶԻՒՊԱՏՈՒՆ ՈՒ Բ. Ը.

ԳՈՐԾԱԿԱՆ Ը

Անցեալ օր Բարեգործական Ընկերութեան Գործակալը Պ. Սիրականեան, թրքահայտակ Հայու մը անցազիր առնելու համար տանկական Հիւպատոսարանն կ'երթայ, ուր հանդիպած առաջին մարդուն կը հարցունէ թէ ո՞վ կամ ո՞ր է Հիւպատոսն: Այս վերջինս, որ հիւպատոսն ինքն է եղած, կը բարկանայ Հայու այս անվայել ընթացքին, ու քանի մը տաք խօսքեր փոխանակուելէ վերջ, բիրտ կերպով կը մերժէ անցազիրը տալ:

Տ. Սիրականեան գրասենեակի վերադառնալու անձին նամակաւ, բացատրութիւն կը պահանջէ Հիւպատոսէն՝ անոր այս անտեղի ընթացքին և վարմանց համար. բայց անակին պատասխան չի տրուիր: Հիւպատոսն ըսած է եղբոր բարեկամի մը թէ ինք այդպիսի նամակ մը ստացած չէ երբէք:

Հիւպատոսարանի զէպիին ներկայ գտնուող մի ուրիշ անձ է կը Լուսինք թէ Տաճիկ Հիւպատոսը իրաւունք ունի եղբոր խտուրթեամբ վարուել իր այցելուին հետ, քանի որ այս վերջինս պաշտօնէի մը հետ վայելուչ լիզուով ու քաղաքավարութեամբ խօսել չի գիտեր եղբոր:

Երկու օր առաջ մի ուրիշ Հայու միջնորդութեամբ դժուարութեան պատճառն եղող անցազիրն առնուեցաւ վերջապէս. բայց Սուլթանի ներկայացուցիչն փոխանակ 2 1/2 տողարի, 14 ու կէս տողար քանձեց աղքատ ճամբորդէն: Այս գումարին 12ը տուգանք է եղբոր... Սակայն զարմանալու շատ բան մը չի կայ ասոր մէջ, վասն զի Տաճիկ պաշտօնեայ մը չի կրնար փոխուիլ՝ Ամերիկայի մէջ պաշտօնավարած ըլլալուն համար:



ՇԱՐԿԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

Կընտրատարակութիւն մը էն Շարքթ օրեր,

ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:

Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ

ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	Տարեկան	10 ֆրանք.
Վեցամսեայ	Բաժանորդագրին կԱՆՍԻԿ	
Եռամսեայ	Վճարելի է միշտ:	

Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին:

To the DICKINS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

Նիւ Եորք, ՇԱՐԿԱԹ, ՅՈՒՆԻՍ 11 1898.

ԱԶԳ

Մեր գործակալներէ կը խնդրենք որ հաճին իրենց քով եղած բոլոր հաշիւներն, մինչև ՏԻԳՐԻՍԻ 30րդ թիւը, մեզ զրկել ընդ փոյթ:

Իրենց բաժնեգրին դեռ չի վճարող այն բաժնորդները որոյ թիւերը դադարեցուցած չենք ցարդ, թող հաճին իրենց պարտքերն վճարել մինչև Յունիս 15՝ եթէ կուզեն թերթ ստանալ անընդհատ:

ԳԱՂՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Վերջին տարիներու մէջ կարգ մը Հայեր երեւան եկան բեմերու վրայ, բերանուն մէջ ունենալով սա խօսքը թէ «պէտք է գաղթել Ամերիկայ. Հայաստանը այլևս դժոխք է. ապրելու յոյսը ընդ միշտ մարած է հոն»:

Բայց այդ «գաղթէ» վարդապետողները և ոչ մի օր կրցած են գիտական կամ պատմական ապացոյցներով հաստատել թէ գաղթով ժողովուրդը կրնայ ապրիլ:

Գաղթականութեան գաղափարին պաշտպան այս քարոզիչներ, յիշելու են որ քանի մը սէնթի փոխարէն ազգի մը ոչնչութեան պատճառ կը դառնան. ազգի մը, որն այսօր գաղտով իւր վիճակ՝ կարողութենէն վեր ճիգեր կ'աւանդ. բանախ, կախաղանի և քարոզանաց անլուր տանջանքի տակ իր կեանքը կ'ուտայ Հայրենեաց սիրուն:

Բայց դե՛, Հայ ժողովուրդը, իսկապէս պիտի համոզուին այդ ազգակործան խորհուրդներուն, և թողով Հայրենեաց, պիտի գաղթեն ծովերէն ու ովկիաններէն ասդին, այն պատիւ յոյսով թէ պիտի կրնան ապրիլ . . .

Մարդկային կեանքի պայմանները միեւնոյն հիման վերայ հաստատուած են, ուր որ ալ լինիս, ուր որ ալ երթաս. եթէ ոչխարի պէս քեզ կոչող ձայնին հետեւիս, առանց ճանչնալու իսկական հովիւդ, պիտի յօշոտուիս, պիտի ոչնչանաս անտարակոյս. չե՞ս մտածեր, հոն, ուր պիտի գաղթես, ախ մը հող, հիւրակ մը, ճիւղ մը փայտ չունիս՝ ամենատարրական պէտքերդ հոգալու: Ո՞վ պիտի տայ քեզ ատոնք, երբ արդէն ունեցածներդ տէրը ըլլալ չես ուզեր:

Ըսէ՛ ինձ, երբ Հայրենեաց օտարին կը թողուս, որ քու սեփական իրաւունքդ է, և ուր կը հանգչին պապերդ ու որդիքդ, ո՞վ պիտի տայ քեզ հանգիստ կեանք և Հայրենիք, որ հոն ազգային սովորութիւններդ պահես, կրօնդ պահես, լեզուդ ու ազգութիւնդ պահպանես:

Հարկ չկայ հազար անգամ կրկնուած հարցը կրկնել թէ՛ ուր են Հնդկաստան, Լեհաստան, Ռուսաստան գաղթող հազարաւոր Հայերն, որոնց համար այսօր հանուր Հայութիւնը սե սգով կ'ողբայ. գնացին ոչնչացան անդառնալի կերպով . . .

Հայեր, հեռի կեցէք և հեռի պահեցէք ձեր բարեկամներն ու ազգականները գաղթելու սե խորհուրդէն. եթէ անոնք կուտան քաջութիւնը չունին, գոնէ կտոր մը նեղութիւն յանձն թող առնեն յանուն մեր կեանքի պահպանման, յանուն Հայրենիքին և վերջապէս յանուն 50-60 հազար որբերուն:

Աշխարհի բոլոր անկիւնները՝ ուր որ ալ երթաք, խաղաղութիւն չկայ. այս դարը կուտ թատերաբեմն է. յաղթանակը չը վճատողին է . . . մենք վհատելու պատճառ չունինք:

«Փիտեմ՝ ձեր բեռը ծանր է ծանր, ո՞վ Հայեր, Բայց կը կարծէ՞ք զայն վերցունեն օտարներ. Թողէ՞ք օտարն, սուէ՞ք եղբայր եղբոր թեւ, եւ զօրացէ՞ք անդեպէս»:

ՎԱՐԴԳԷՍ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

Դարուս վերջին օրերը ի՛նչ օրեր պէտք էր ըլլային, ի՛նչ օրեր եղան . . .

Յիսուսի լեռան քարոզը մինչև վերթէօրիս նիւնդա լճին մօտերը քարոզուելէ վերջ, լուսաւեւ իմաստասէրներու փրկիտփայտութիւնները լուսաւոր աշխարհին մէջ տարածուելէն յետոյ, գիտական հրաշալի գիւտերէն վերջ, —անցեալ օր երկրորդ Լուսին մըն ալ գտաւ աստեղագէտի հեռադիտակը—, տակաւին իտէլական երանաւէտ օրերուն մէջ չէ որ կ'ապրինք:

Դարավերջը պէտք է՞ր որ կրօնքի, գրականութեան և գիտութեան երրորդութեան աստուածացուին ըլլար, և յառաջիկայ 20րդ դարուն մէջ ալ անոր թագաւորութիւնը տիրէր, գէթ եւրոպական և Քոյովկան աշխարհներուն վրայ:

Անկեղծ Բրիտանեան, մեծ իմաստասէրը և հանճարեղ գիտունը դառն կսկիծ մը և խորունկ յուսահատութիւն մը չե՞ն գգար՝ երբ ներկայիս մէջ կը տեսնեն թէ Բրիտանեայ և լուսաւորուած ազգեր աշխարհագրագիտներ կը մղեն իրարու դէմ. թէ անպաշտպան ազգեր և ժողովուրդներ նիւթական և բարոյական կեղեքումներու տակ կը ճնշուին: Ասոնք հաւատացած էին թէ՛՝ ալ այս օրերուն ազատ պիտի ըլլային ազգերը, գո՛հ ժողովուրդները և երջանիկ՝ անհատները . . .

Ի՛նչ կը խորհին Փառքըր, Սքիֆֆուրը և Էտիսըն . . . : Երէկ սե հողը ի՞նչոզ ձերունի կ'աւտըթանի խորումները՝ մասամբ՝ դառն յուսահատութեան և թախիծի արդիւնք էին, վասն զի մեծ ձերունին չը կրցաւ Իւլանտիոյ մէջ բարորութեան կեանքի սկզբնաւորութիւնը տեսնել . . .

Մարդկութեան մէկ մասը, այս վերջին տարիներուն և օրերուն մէջ, զրկանքներու և տառապանքներու ամենէն աշուճ խոլի կը տանջուի ու կը տառապի . . . Մարդիկ անօթի են . . . : 1890ին Աւեստրիոյ, 91ին Իւլանտիոյ, 92ին Գերմանիոյ և 95ին Հնդկաստանի ժողովուրդները սովատանջութեան անկարագրելի արհաւիրքները կրկնէն վերջ, ու պատառ մը չոր հացի համար կեանքեր զոհուելէն յետոյ, այսօր Իտալիոյ և Սպանիոյ ժողովուրդներն են որ փողոցները թափառած հաց կ'ուզեն, հաց . . . : Եւ շատ հաւանական է որ, շատ չ'անցած, նիւ Ետրքի աղքատ ժողովուրդն ալ դատարկ ստամոքսով փողոցները խուռած հաց պահանջէ, քանի որ ցորենի վաշխառու վաճառականները, մասնաորարար Լէյթըր անունով մէկը, միլիոններ դիզեցին ժողովուրդի ամենէն պարզ և կենսական սնունդէն: Հացը սղած է նիւ Ետրք. հացը թերիս օր մը անմատչելի պիտի ըլլայ աղքատ դասակարգին՝ ուրիշ երկրորդական պէտքերուն պէս. օտակալի չէ . . .

Իտալիոյ ժողովուրդը, որ տարիներով կրեց անհաւասար և ծանր տուրքերու կեղեքիչ բեռը, և որուն միշտ համբերութիւնը քարոզուեցաւ, ալ չի կրնար համբերել զանազի անօթի է անիկայ. և անօթի ժողովուրդ մը երբեմն պղտիկ՝ միանգամայն բարկացող տղու մը բնութիւնը կ'ստանայ, և շատ անգամ անկարելին ու այլանգակը կը պահանջէ, քանի որ իրեն մերժուած է կարելին և բանաւորը: Հողովէն թղթակից մը կ'ըսէ թէ՛ Բիտալիոյ բարեկացած ու յուսահատ ժողովուրդը փողոցները խուռած՝ հրաշալի քանդակագործուած արձանները և գեղակերտ յիշատակարանները ջարդ ու փշուր կ'ընեն: Պարսպ ստամոքսով ժողովուրդը գեղարուեստէն հաց կ'ուզէ: (!)

Հացի աւելի կենսական և ահաւոր կուտին մէջ ազգերը ալ մոռցած են քաղաքական ազատութեան կուտները: Իտալիան հիմակ աւելի կերակուր կ'ուզէ քան հանրապետութիւն: Սպանիան հաց կ'ուզէ առաջ որ հրացանը վեր առնէ՛ ընթաց Սամին դէմ՝ կուտելու համար: Եւ եթէ այսպէս շարունակուի, սովատանջ Քիւպան աղքատութիւնէն առաջ հաց պիտի ուզէ: Հայաստանի համար ալ միեւնոյն բանը չէ՞՞ այսօր: Գաղթականներուն ապրուստի ու որբերու սնունդի անմիջական պէտքերը չ'են որ կ'ըզբաղեցնեն մեզ:

Իցի՛ր թէ վերջացող 19րդ դարուն հետ վերջանային մարդկութեան բոլոր թշուառութիւնները. 20րդ դարուն առջի օրերը այս վերջին օրերուն հապտատեկերը ըլլային, և մեր բազմատանջ ազգին համար ալ ալ ծագէր ազատութեան, անդորրութեան արեւը: Ազատութիւն, եղբայրութիւն և հասարակութիւն բառերը փոխանակ քարէ տառերով ազգի մը մեծ շէնքին մարմարինի վրայ փորագրուած կենալու, ամեն մարդու երրորդութիւնը ըլլային, ամեն մարդու սրտին վրայ դրոշմուէին: Թ. Չ.

Գրականեակ Բարեգործական Ընկ. Թիւ 145 Իւթ 23րդ փողոց

Անգործ և հացի անմիջական պէտք ունեցող կարօտ Հայոց վիճակն անաշուաբար ինկատի առնող ամէն ոք, կը յուսամք, կատարելապէս համոզուած է թէ Հայոց Բարեգործական Ընկերութեան կարևորութիւնը ժամանակիս անհրաժեշտ հարկերէն մին ըլլալ սկսած է: Տարաբաղդներուն գործնական օգնութիւններ ընելու համար ցարդ եղած ջանքերն թէև ապարդիւն մնացած չեն, բայց գործն աւելի եռանդով յառաջ մղելու համար, ընկերութեանս բարեկամք իրենց նիւթական և բարոյական նպատակներն անպակաս ընելու են: Ընկերութեան ուժն, օր ըստ օրէ անոզ պէտքերուն հասարակչիւն ընելու համար, գործնականապէս աջակցելու և ոչ թէ կոյր գիտութեան քննադատելու պէտք կայ: Եթե ու փոքր գոհութեանց արամադիր ամէն ոք յարգանքով կը հրաւիրուի այն բարեգործական կազմակերպութեան ձևք, սիրտ և ողի տայ:

Մ Ա Ն Բ Ա Լ Ո Ւ Ր Ք

Բալուցի միամիտ Հայ մը որ կը պատրաստուէր այս օրերու Հայրենիք վերագրուեալ, անցեալ գիշեր իւր բուրջ հարստութիւնն, որ կը բաղկանար 300 տոլարէ, գողցնել տուաւ:

Այս անձ գիշեր ժամանակ տուն վերադարձած ատեն՝ փողոցային կնկան մը հետ կը բարեկամանայ, որ տեսնելով Հայու ունեցած թղթագրամին ծրարը, կը յաղթի զայն գողնալու կծիկը դնել: Կը լսենք թէ կինը ձերբակալուած է, բայց գողօնն կարելի չէ եղած գտնել:

—Տիկին և Տիար Ս. Կիւրեղեան անցեալ Շարքթ օր քաղաքէս մեկնեցան, Հայրենիք վերագրուեալու համար: Բարի ճանապարհ:

—Տ. Պ. Թորոսեան, քաղաքիս Միացեալ Աստուածաբանական վարժարանի աշակերտ, իւր շրջանն լրացնելով՝ յաջող քննութեամբ իւր վերկայականն ստացաւ անցեալներն:

—Քաղաքիս Կուս փողոցի 33 թիւ շէնքը կրակ առաւ անցեալ օր և մի քանի յարկերը մոխիր դարձան. այս շէնքի մէջ էր նաև Շալճեան Հայ կազմատունն, որ բարեբաղդաբար վնաս չի կրեց:

—Հրետանի մէջ հաստատուած է ազատ լսարան մը և որբայինամ ընկերութիւն մը. բայց ցաւալի է ըսել թէ քաղաքին հայեր քիչ քիչ կը ցերուին՝ գործերու սակաւութեան պատճառով:

—Բօնօրօտի Հայոց Որբայինամ խմբակը իր Մայիս 22ի նստին մէջ որոշեց իր առձեռն ունեցած վեց անդիւսական ոսկին Պօլիս՝ Պատրիարքարանն զրկել:

—Նոյն Պրբայինամ խմբակը կը հերքէ Եփրատի 31 թուին մէջ երևցած յօդուած մը, որ կ'ըսէ եղբր թէ Բօնօրօտի Որբայինամներն իրենց նիստին մէջ նստական խնդիրներով կ'ըզբաղին:

—Նիւ Պրիթընի թերթերն կը պատմեն թէ Մայիս 27ին Նոյն քաղաքի մէջ ձերբակալուած է Հայ մը Փօլ Երեկ կամ Պօլոս Մանուկեան անուն, ու ձերբակալող ոստիկանին հետ նիւզբրի Փօրթ զրկուած է՝ դատուելու համար: Երեկի ձերբակալութեան պատճառն սա է. շարքիներ առաջ Մարգարեան անուն մէկը Լինի մէկ դատարանին առջև կը դատուի եղբր, ու փաստարան շուտեցած ըլլալուն համար՝ 10 տոլար և իր դրամատան գիրքը (որ 10՛ տոլար կը ներկայացնէր) յիշեալ երեկի կուտայ, խնդրելով որ վերջինս այդ դրամով իրեն համար փաստաբան մը վարձէ. սակայն Փօլ Երեկ՝ այդ դրամներն առնելէ վերջ, նիւ Պրիթըն կը փախի, փոխանակ իւր ընկերով համար փաստաբան մը վարձելու:

—Հարթֆըրտի Աստուածաբանական վարժարանի այս ատուան շքեղանաւարտներէն մին Հայ մ'է, Մարաշի Աւետիս Հէճիկեան անուն: Ընթացաւարտ Պարոնն, որ Մարաշի միսիօնարաց ձեռքով Ամերիկայ եկած էր բարձրագոյն կրթութիւն առնելու համար, մտադրէ է եղբր Հարթֆըրտի Հայոց քարոզել՝ Սամթէ Բօնկրիկէշընը եկեղեցիին մէջ, ուր հայերէն պաշտամունք կը կատարուին այժմ՝ ամէն Կիրակի օրեր:

—Հարթֆըրտէն, Գարբիէլ Սոյատոյեան անուն Հիւսէյնիկի մէկի մը որդին՝ Կօկօ անուն, Հնչակ և ուրիշ ազատական թերթեր կը զրկէ եղբր Խարթի Հայու մը հասցէին՝ անկէ վրէժ լուծելու համար: Աւելորդ է ըսել թէ Կօկոյի այս դժոխային ծիւղակին մէջ կը բռնուի խեղճ Խարթիկը, որ մեծ գոհարութեամբ հաղի կը յաղթի օձիքը ազատել կառավարութեան ձեռքէն: Կօկօ իր այս

գիտաւորութիւնն յայտնած է եղեր կանխաւ նամակի մը մէջ, որ բընուած է վերջերս: Սոսկալի մասնութիւնն չէ՞ այս:

—Տիար և Տիկին Մատթէոսեան որոց ամուսնութիւնն տեղի ունեցած էր անցեալ շաբթու ի Տօրչէսթըր, քաղաքս եկան՝ հոս հաստատուելու համար:

—Անցեալ Շաբթ երեկոյ տեղի ունեցաւ հրապարակային ընդհանուր ժողով մը ի Ուէսթ Լոպոքըն Արթ. Խաղ վարդապետի նախագահութեան ասի: Նոր եկեղեցի մը շինելու խառն յանձնախումբն իր տեղեկագիրն բերաւ, որով կը խնդրէր մասնաւորապէս որ այս հանգանակութեան մասնակցող և դեռ չի վճարող անձինք փութան իրենց նուէրներն՝ ըստ կարելոյն՝ շուտ հասցունել յանձնախումբին:

—Տըթ. Գարեգին Սիւնի որ անձնական գործի համար Պօսթոն գնացած էր, վերադարձաւ անցեալ երկուշաբթի օր:

—Ընթացող օրերէն Տ. Բաղդոսեան 10 տարի զրկեց վաղիկակ վարդապետին՝ ի նպատակ որբերու: Այս դժբախտ հանգանակուած էր երեկոյթի մը մէջ:

ԱՌՈՋԱՐԿ ՄԸ ՉԻՔԱԿՈՅԷՆ

Քաղաքէս մէկէ աւելի Հայեր վերահաստատ եղան տեղւոյս զինուորական մարմինն՝ «երեք շաբթէն 100,000 կամաւորները երբորդ կոչի մը»:

Այս երկրի այն Հայեր որ կամաւոր լինելու որոշումը ըրած են, Հայ ազգը շեշտապէս կը պատուով եթէ Հայկական խումբ մը կազմելով մի որոշ բանակի վերաբերին: Տարակոյս չի վերցնել որ այսպիսի ծանօթ խումբ մը կը ցուցնէ Հայ ազգի երախտիքը այն քայլերին, որ այս երկրը առաւ մեր Հայրենիքի վերջին աղետաբեր օրերին, և ապագայ օրերին համար ևս կ'երաշխաւորէ այս ազգի բարոյական լուեկայն դաշնադրութիւնը դէպի մեր Հայրենիքը:

Ո՛ր էր թէ 10-15000ի շարի հալածութիւնը գէթ կարենար 50-100 ի շարի խումբ մը հանել:

Բանակցութեանց համար գրել առ, Փրօֆ Պ. Թաթարեան 6648 Վօպաշ Ալիւի, Չիքակօ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔՆԵՐ

Պօսթոն, Յունիս 4. Անցեալ երկուշաբթի երեկոյ, Մայիս 30 ին, Տ. Աւետիս Մատթէոսեանի և Օր. Լիտեր Բէմայանի ամուսնութիւնն տեղի ունեցաւ աղջկան հօր Պատ. Գ. Կ. Բէմայանի ասն մէջ ի Տօրչէսթըր, որ քաղաքս մէջ արուարձանը կը համարուի: Պատի միջոցն Աստուածատուրեան, Խարերդի Եփրատ քօլէճի Փրօֆէսորներէն մին, Հանդիսին ներկայ էին բարեկամներ՝ Նիւ Եորքէն, Պօսթընէն, Ուէսթըրէն և ուրիշ շատ մը քաղաքներէ: Փրօֆ. Ենչիլիան ըստ առաջ պատշաճի հակիրճ բանախօսութեամբ երջանակութիւն մաղթեց նորապակ ամուսններուն: Օր. Մէյ Հօքս, հարսի դասընկերն ու հարսնջոյրը իր դաշնակահարութեամբ ու ընտիր երգերով մեծ փայլ մը տուաւ հարսանեկան հանդիսին:

Տ. Աւետիս Մատթէոսեան՝ Խարերդի բարեկիրթ երեսասարդ մէջ, որ քաղաքիդ Ֆիլինթ անուն հուշակաւոր կահկարասեաց վճառատան մէջ վճառողի պաշտօն կը վարէ: ԱԼԻՍ

Հայկական «Պայտիքըլ Բլոկ» մը կազմելու համար նախնական ժողով մը պիտի ըլլայ վաղը առտու ժամը 10ին Սէնթըրըլ փողոցի մէջ: Միանալ ուզողներն կը հրաւիրուին ներկայ գտնուիլ որոշեալ ժամուն՝ 59րդ փողոցի և 7րդ Ալիւի անկիւնը: Փ. ՇԱՀՊԱՆՆԵՐ

Ֆիշպըրկ, Մայիս 30

Ամերիկայի Հայ գաղթականութեան մէջ նոր թուական մը կը բացուի: Ամուսնութեանց թուականն է այդ: Մինչև արեւնոտ դէպքերը գաղթականութեան մէջ մի անհատի միակ ու տենդոտ առաջադրութիւնն էր ապրուստի համետ դրամագլուխով մը Հայրենիք վերադառնալ: Ամերիկայ ամուսնանալը ազգային ուժեր կը նկատուէր: Արդ հայկական հարսանիքներ սկսած են իրարու յարմարելու: Նոր ծաղկիլ սկսող ծառի մը ծաղկներուն նման՝ Ամերիկայի ամեն կողմը. որոցմէ միոյն Ֆիշպըրկում ներկայ գտնուելու պատիւն ունեցայ անցեալ Շաբթ իրիկուն, Մայիս 28ին:

Այս ամուսնութիւնը տեղի ունեցաւ իմէջ Պր. Կարապետ Թաշճեանի (Մալաթիացի) և օրիորդ Մաքրուհի Ենովանեանի (Պարտիզակցի): Պատի արարողութիւնը կատարեց Մր. Հիշքօք: Պր. Կարապետ մի բարեկիրթ երիտասարդ է, և օրիորդ Մաքրուհի՝ դպրոցական լաւ կրթութիւն ստացած մի օրիորդ:

Պր. Կարապետ փափաքելով որ բոլոր Ֆիշպըրկի Հայերը իրեն հետ ուրախակից ըլլան, երկու տարբեր տեղերու մէջ մեծ և ճոխ խնճոյքներ պատրաստած էր, ուր մեծ թուով Հայեր, այր և կին, շատ ուրախ ժամեր անցուցին:

Տարի մը առաջ Ֆիշպըրկի մէջ մէկ Հայ տիկին հաղիւ կար, իսկ այս անգամ այս խնճոյքին մէջ, ուր ես կայի, տեսայ որ հոն բացի ինչ ամէն ոք իր ամուսինը իւր քովն ունէր: Կրնաք երեւակայել թէ որչափ ինքզինքս դժբաղդ գգայի:

Կը մաղթեմ հարսին ու փեսային երանաւէտ կենցաղ ու բարգաւաճ կեանք: Գ. Պ. Չ.

ԿԱՐՄԻՔ ՄԸ ՀԸՏՈՒՆԷՆ

Յունիս 1, Հըստըն, Տիգրիսի 29րդ թիւի մէջ կարդացինք Ուսթըրէն թղթակցութիւն մը որ կ'ըսէր թէ «ցառակցական հեռագիր մը տալու գաղափարին դէմ մաքառողներուն մին էր Եփրատի արժանայարգ խմբագիրն, որ կը կարծէր թէ այդ ընթացքով Տաճիկ կառավարութեան և Սուլթանի բարկութիւնն պիտի գրգռուէր Հայ ժողովրդեան դէմ»:

Ենթադրեմք թէ այդ իրաւ է. բայց չէ՞ որ Տաճիկ կառավարութիւնը հակառակ է օտար երկրի մէջ հրատարակուող Հայ կրագրաց. և չէ՞ որ նոքա ալ Տաճիկ կառավարութեան բարկութիւնն կը գրգռեն, և ինչո՞ւ չի դադրեցունել Եփրատի հրատարակելը, և չի շնորհ դադարեցունել բոլոր արտասահմանի մէջ հրատարակուող Հայ թերթերը: Ա. ԹԻՔԱՆՆԵՐ

Յ 5. 00 ՆՈՒՒՔԻ

Գէորդ Մորուքեան, կամ Գէորդ Ճիկէրեան, կամ Մէրին Ճօրճ և կամ Պուրսապեան Գէորդ անունով 30 տարեկան Արաբկերցի անձին ուր ըլլան ով որ առաջին անգամ իմացնէ ինձ, հինգ տարի նուէր պիտի ստանայ: Այս անձ նիշար կազմուածքով, սեւ մազեր և սև աչքերով մէկն է, որ վեց տարիէ իվեր Ամերիկայ կը գտնուի: 3-4 տարի աշխատած է 57րդ փողոցի մետաքսի գործարանը: Վերջերս կը գործէր Սքոթթ տեղւոյն մետաքսի գործարանին մէջ, և երբեմն ալ 31րդ փողոցի ըրկընի գործարանը:

Գէորդ, որ իւրանտացի աղջկան մը հետ կը կարծուի թէ փախած է քաղաքէս՝ 3-4 ամիսէ իվեր, երեսի վրայ ձգած է իւր կինն ու գուստը, որք անհամբեր լուրի մը կ'սպասեն: Գրել Յ. Սէրպէկեանի: Տիգրիսի միջոցաւ:

ՆՈՐԱՎԷՊ ԱՉԳԱՅԻՆ

ԱՆՄԵՂ ԶՈՂԵՐ

Ա.

Նա զգաց նուազում և թուլութիւն, և ահամայ կանցնելով քայլերը՝ յենեց պատին. այս դիրքում ընկաւ տխուր խորհրդածութիւնների մէջ, և քնից արթնացողի պէս ինքն իրան մենախօսեց. — Միթէ երէկ այս միջոցին մօտը չէ՞ր. իր առողջութիւնը լաւ գտայ. և երբ, հէնց ինչոյն շարագուշակ խորհուրդների ազդեցութեան տակ՝ լուռ արտասուում էի, ինքը չէ՞ր ինձ յուսադրու՞ թէ բըժիշկները սակ են վստահը անցած է. մի քանի օրից առողջութիւնը կը կազդուրի. անհրաժեշտ է հանգիստ մնալ. պէտք չէ ո՛չ ներքին խորհուրդների և ո՛չ դրսի՝ ընտանեկան վիճակի աննպաստ լուրերով վրդովուել:

Վերջացնելով մենախօսութիւնը, կարծես անբացարարի մի ներքին ոյժ զգաց, ըստ պէտքի, խորտակած յոյսը վերակենդանացաւ: Մնկների դուրսը դադարել էր. պատրաստուած էր քայլելու երբ յանկարծ միտն ընկաւ բժշկի ազդարարութիւնը — դեղերը դադարեցրել է. ինչո՞ւ. այն վիճակի հիւանդի դեղը կ'ազդարեցնէ. ո՛չ, ո՛չ, դա անկարելի է: Նորից շարագուշակ խորհուրդները սաղայէլեան ահաւիտի բուժողով կուտակեցան իր գլխի վերայ մի րոպէում աչքի առաջ պատկերացաւ մահը, գազաղը, գերեզմանի ցուրտ փոսը, ապա սովը, իր սրտի հատոր դաւաւնների սովալուկ տանջանքները, կրկին մահը, մահը. աչքի առաջ պատկերացած այս սոսկալի տեսարանին չգիմանալով իր կանացի փափուկ սիրտը, աչքերից աղբիւրի պէս արտասուքը շոսց, որ թափելով Գուրգէնի այտուրին, մանուկը լացաւ. մայրը պինդ սեղմեց գրկին, և արտասուակց աչքերը դարձնելով դէպի երկինք — ըսաւ.

— Հեռու, հեռու ով շար խորհուրդներ. Երկինք, գթո՛ւ, անմեղ զոհերիս, ազօթելով, փոքրիկների խորտակեց իրան հեռակալու...:

Մինչդեռ դրսում, մայրը գաւակներին հետ փողոցներում մտամոլոր թափառում, սոսկալի մտապաւկերներով տանջուած, ողբում, աղօթում էր, ներսը, մահամեծ հիւանդը՝ Հրանտ Սուրէնեան մահւան ճանկերում թաղուած էր:

Նախընթաց օրը, Տիկին Սուրէնեանը ամուսնից լսել էր բժշկի աննպաստ վճիռը: Սուրէնեանը զգալով որ իր կեանքի ժամերը համրած են, ամուսնից ինչպէս էր յարգը օրը իր հետ երեխաներին բերել:

Նախընթաց օրը, Տիկին Սուրէնեանի բաժանումից մի քանի րոպէ յետոյ, հիւանդը նուազել, մահճակալից գլորուել էր տախտակամածի վերայ, և այդ րոպէից սկսել էր նորահոգութեամբ. ամբողջ գիշերը, ամենաբարձր տաքութեան մէջ գաւառացի և երկու անգամ մահճակալից դուրս թուել, մինչև հիւանդանոցի դուռը վազելով պոռացել էր. «Իմ ամուսինս, զաւակներս կ'ուզեմ, նորանք՝ իմ համրոյս և վերջին կտակըս տամ. թողէ՛ք, իսէր Աստուծոյ, թողէ՛ք, Հայրական վերջին պարտքս կատարեմ, ապա մեռնիմ»: Բայց հիւանդապահները պառկեցրել են իրան տեղում:

Կէս գիշերին տենդը նուազել, մահուան նշանները բազմապատկուել էին, մշտնջենական պաղը ոտքերի ծայրերից սկսելով ու տարածելով ամբողջ օրգանիզմում, սանձ էր դրել նորա եռանդին. այժմ Սուրէնեանը կիսանառազ ընկած էր մահճա-

կալի վերայ. երբեմն իր փոս ընկած աչքերը բացում՝ խնամքով դիտում էր շուրջը, բայց չգտնելով իր սիրելիները, կրկին փակում էին:

Հիւանդը յուսակաուր էր. մի անգամ ևս բացեց աչքերը և ուրախութեամբ դիտեց իր սիրելիները.

— Այսօր ի՞նչպէս ես. դէմքիդ վերայ ուրախութիւնը փայլում է, ամբողջ հիւանդութեանդ միջոցին, առաջին անգամ եմ նկատում դէմքը ուրախ. փառք Աստուծոյ, երէկւայ յուսադրութիւնը իրականանում է. երեխաները բերել եմ, ահա ապի նորանք:

— Մի առ մի երեխայոց մօտեցուր շըթուքներին: Ահա այդպէս, առաջին փափաքս կատարեցաւ:

(Շարունակելի)

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Վրչ. Գրադարանի, Ֆիշպըրկ—Շատ աղէկ. յանձնարարած էինք, բայց չի նուած շէր տակաւին:

Պ. Շ. Մանչէսթըր—Չեր թերթերը շարունակ զրկուած են՝ մեզ արուած հասցէով:

Յ. Մ. Ն. Հարթֆըր—Գիրքը զրկուած է ձեզ ժամանակին: Փութէն խնդրեցէք:

Յ. Գ. Ն. Ֆոյ Րիվըր—Չեր առաջին համառոտելէ վերջ զրկեցէք մեզ. վերջինն շեք կրնար ընդունիլ: Եթէ ուրիշներ ունիք զրկեցէք. ընտրութիւնն մենք կ'ընենք և կ'իմացնենք ձեզ:

Մ. Տ. Յ. Չիքակօ—«Ռուսահայ» շարունակութիւնն դեռ չ'ըստացանք. ե՞րբ պիտի զրկէք:

Ս. Յ. Ֆոյ Րիվըր—Շարունակեցէք գրել: Յանդուութիւնը փորձին մէջ կը գտնուի:

ՀԱՆՆԵԼՈՒԿՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Տիգրիսի 10րդ թիւին մէջ հրատարակուած առաջին հանելուկին ուղիղ լուծումը ոչ ոք կրցաւ զրկել մեզ: Երկրորդ հանելուկը լուծեցին հետեւեալ անձինք. Մ. Ֆ., Անձնօթը, Յ. Կրուճեան, Մ. Հապէշեան, Տիկին Արաքսի Կ. Գարակիւլեան, Յ. Գ. Մելգոնեան, Արշակ Պողոսեան, Յովսէփ Գալուստեան, Յ. Յ. Պորգաբեան, Յովսէփ Փափազեան, Մըկրտիչ Պոյաճեան և Ս. Աշճեան:

Նուէր ստացած են Մ. Ֆ. Նիւ Եորք. Տիկին Գարակիւլեան, Պօսթոն և Յ. Գալուստեան՝ Ֆիլատէլֆիս:

ԼՈՒՇՈՒՄՆ

Առաջին հանելուկի լուծումն հետեւեալն է:

Չորս ընկերներն ալ նախ՝ իրենց խնճոյքներու 7 հասրը մէկ սէնթի վաճառեցին, որով առաջինն ունեցաւ 14 սէնթ (2 խնճոյ մնացորդ). երկրորդը՝ 11 սէնթ (3՝ մնացորդ). երրորդը՝ 8 սէնթ (4՝ մնացորդ) և չորրորդը՝ 5 սէնթ (5՝ մնացորդ): Յետոյ մնացած խնճոյքներն ալ նոյն գումով ծախեցին, այսինքն՝ հասր երեք սէնթի, որով առաջինն իր արդէն ունեցածի վրայ աւելցուց 6 սէնթ (ընդամենն 20). երկրորդը աւելցուց 9 սէնթ (ընդամենն 20). երրորդը՝ 12 սէնթ (ընդամենն 20) և չորրորդը՝ 15 (ընդամենն 20):

Երկրորդ հանելուկին պատասխանն է 119:

ԿՈՐՍՈՒՈՂ ՄԸ

Տիգրանակերտցի թաշճի Յովհաննէս Մուրատեան անուն անձին հասցէն ու սեղը գիտցողներն եթէ լուր յղեն Խմբագրութեանս, շնորհակալ պիտի ընեն զայն փնտռող բանակաւորներն ու ազգակիցներն:

